Վերապատրաստող կազմակերպություն

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Հայրենների ուսուցումը ժամանակակից մեթոդների գործադրմամբ»

Կատարող՝ Հասմիկ Հարությունյան - Գյումրու «Վ.Թեքեյանի անվան համար 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար(ներ)՝ 1.Խաչատրյան Մարիետա
բ. գ. թ., դոցենտ

2.Հայրապետյան Աստղիկ
բ. գ. թ., դոցենտ

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն_____3

Գլուխ 1.Հայրները օտարների գնահատմամբ_____5

Գլուխ 2.Քուչակը՝ որպես միջնադարյան հայրենների նահապետ_____7

Գլուխ 3.ժամանակակից շունչ միջնադարյան հայրեններին_____13

Եզրակացություն_____18

Օգտագործված գրականության ցանկ _____19

Ներածություն

Տեխնոկրատիզմի հաղթարշավի դարում դժվար է այսօրվա աշակերտին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ:Դժվար է,բայց ոչ՝ անհնար:

Ուստի մեր հիմնական նպատակը պետք է լինի գտնել առավել արդյունավետ տարբերակներ և մեթոդներ՝դրան հասնելու համար:

Այդ գործընթացը պետք է ընթանա ավանդական փորձի և նորագույն տեխնոլոգիաների համամասնության զուգորդումով,բայց ոչ որևէ մեկի գերակայությամբ:

«Աշակերտակենտրոն» ուսուցման գործընթացը չի ենթադրում ուսուցչի դերի իսպառ բացակայություն, աշակերտի քմահաճույքների գերակայություն:

Ավելին,ուսուցման յուրաքանչյուր գործընթացում աշակերտը պետք է իր կողքին զգա ուսուցչի անգնահատելի դերը, առանց որի անհնար կլինի իր հետագա գործունեությունը:

Իսկ ինչպե՞ս պետք է այսօրվա՝քսանմեկերորդ դարի աշակերտը, ուսուցչից առավել տիրապետելով ժամանակակից տեխնոլոգիաներին,ներգրավվի դասագործընթացում,կարողանա ինքն իրեն գտնել դասին:

Ի՞նչ պետք է անի ուսուցիչը այդ բարդ ու դժվարին գործընթացը իրականացնելու համար:

Մենք մտածում ենք,որ դրա համար շատ բան պետք չէ.ընդամենը լինել ազնիվ աշակերտի հետ և **խոսել** նրա հետ:

Աշակերտը պետք է լսի ուսուցչի կենդանի խոսքը,այն պետք է լինի բովանդակային,

պարզ,բայց ոչ՝պարզունակ:

Հավատարիմ մնալով վերը նշված սկզբունքներին,դրանց անշեղորեն հետևելու պատրաստակամությամբ՝մեզ ներկայացված հետազոտական ցանկից ընտրեցինք «Հայրենների ուսուցումը ժամանակակից մեթոդների գործադրմամբ»թեման:

Ինչու՞…Առաջինը,որ մեր ուշադրությունը գրավեց,այն զուգադիպությունն էր,որ թեման ներկայացված ցանկում թվով տասնվեցերորդն էր,իսկ միջնադարյան հայրենների հեղինակ ճանաչված (չնայած դպրոցական դասագրքերում մինչև այսօր էլ գրում են՝**հեղինակ համարվող**)Նահապետ Քուչակը ՝տասնվեցերորդ դարի բանաստեղծ:

Այնուհետև մտածեցինք,որ այստեղ ուսուցիչը ավելի շատ ասելիք ունի,քանի որ թեման հոգեհարազատ է նաև աշակերտներին,իսկ դրա նորովի մատուցման եղանակները շատ ավելի բազմազան են:

Նաև մեր ընտրած ժամանակակից մեթոդներից մեկը կլինի այն նորամուծությունը(ինչ-որ տեղ անսովոր),որ աշակերտները,բացի միջնադարի բանաստեղծ Նահապետ Քուչակի անունից(ինչը ավանդաբար լսել են հայրեններն անցնելիս),կլսեն նաև հայրեններ քսաներորդ դարի բանաստեղծի գրչով ստեղծված.բանաստեղծ,ով խիզախեց ձեռք մեկնել հայրենի ժանրին,բայց համեստորեն փորձում էր լռել այդ մասին:

Հայրենների նկատմամբ նրա բանաստեղծական պատկառանքը թույլ չէր տալիս բարձրաձայնելու,թե ինքը սկսել է վերածնել բանաստեղծության այդ ժանրը /էլ.գ. 1/

Այդ բանաստեղծը Համո Սահյանն է:

Մեր հիմնական նպատակը հայրենների՝նորովի ներկայացնելն է.իհարկե,հավատարիմ մնալով ավանդականին,նաև կամուրջ հանդիսանալ միջնադարյան ու նորօրյա հայ քնարերգության միջև:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է 3 գլխից՝իրենց ենթագլուխներով:

Վերջում՝

- եզրակացություն
- օգտագործված գրականության ցանկ

ԳԼՈՒԽ 1. Հայրենները օտարի աչքերով

Հայրենները գեղարվեստական բարձր հատկություններով օժտված արժեքներ են, հայ քնարերգության ամենասքանչելի մարգարիտները:

Այս խոսքերը հայ ազգի մեծ բարեկամ,բանաստեղծ,գրող,թարգմանիչ,գրական քննադատ,գրականության,պատմաբան,փիլիսոփա,արձակագիր,դրամատուրգ,պատմաբան և գրականագետ,ռուսական սիմվոլիզմի ներկայացուցիչ Վալերի Բրյուսովինն են:

Օտարազգի հայասեր,ով 1910-ական թվականներին հետաքրքրվել է հայ պոեզիայով, թարգմանել հայերենից ,կազմել **«Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից միչև մեր օրերը»** ժողովածուն,ինչի համար 1923թ.-ին արժանացել է Հայաստանի ժողովրդական բանաստեղծի կոչման:

Նա կարողացավ ընթերցողին հաղորդել հայ ժողովրդական երգերի անկրկնելի հրապույրը:Նրա թարգմանությամբ առաջին անգամ ռուսերենով հնչեցին Նահապետ Քուչակը և Սայաթ-Նովան:

«Միջնադարյան հայկական քնարերգությունը մարդկային հոգու այն սքանչելագույն հաղթանակներից է, որոնք երբևէ ճանաչել է համայն աշխարհի տարեգրությունը: Բոլորովին յուրակերպ մի պոեզիա, իր ձևերով մեզ համար նոր,խոր բովանդակությամբ, տեխնիկայի փայլուն վարպետությամբ…»,-ասել է Բրյուսովը /էլ.գ.2 /

- Եթե ուսուցիչը հայրենների ուսուցումը սկսի այս նախաբանով,միջնադարի մասին այսպիսի սքանչելագույն տողերով(Բրյուսովի բնորոշմամբ),եթե հայ երեխային կարողանա մի ակնթարթ տեղափոխել միջնադար,կարծում ենք,որ աշակերտների ճնշող մեծամասնության մոտ հաստատ հետաքրքրություն կառաջանա այդ հրաշք ժամանակաշրջանի մասին ,իսկ եթե ,լավագույն դեպքում ,նաև աշակերտը ըմբռնի,որ այդ միջնադարը իր անցյան է ,առանց որի չէր լինի ներկան,ուրեմն փա՛ռք այդ աշակերտին,փա՛ռք այդ ուսուցչին:
- Մենք կարծում ենք,որ ուսուցիչը պետք է կարողանա աշակերտի մոտ առաջացնել ազգային սնապարծություն կոչենք ,թե՝նախանձախնդրություն,այս դեպքում կարևոր

չէ.կարևորն այն է,որ աշակերտը հասկանա,թե ինչպես օտարը կարող է երեք ամսում հայերեն սովորել,տիրապետել հայոց լեզվին այնքան,որ ինքնուրույն կերպով կարելի լիներ թարգմանել հայկական պոեզիան,մանավանդ հին և միջնադարյան(ինչը թվում է անհավատալի,սակայն հենց ինքը՝Բրյուսովի կինն է պատմել այդ ամենի մասին): Ուրեմն եկե՛ք Բրյուսովից պակաս հայասեր չլինենք:

Եկե՛ք փայփայենք մեր ունեցածը,որովհետև կորցնելու դեպքում հաստատ մե՛նք ենք կորցնելու և ոչ՝օտարը:

ԳԼՈՒԽ 2. Քուչակը՝ որպես միջնադարյան հայրենների նահապետ

Արդեն մեր թեմայի սկզբում նշել էինք,որ ցանկալի կլինի դասը հարստացնել ավանդակա-

նի և ժամանակակից մեթոդների միահյուսումով:

Ուստի դասը կսկսենք **հայրենների** երգով,հրաշալի մի տեսանյութով,որը /էլ.գ.3/ հագեցված է միջնադարյան կոլորիտով:

Եկո քեզի նուռ մի տամ,կըտրէ ,տես քանի՞ հատ ունի.

Ամեն հատի պագ մի տուր աւելին հատամ թէ պիտի.

-Գընա,ծօ տղայ տըխմար,ես ըզքեզ խելօք գիտէի.

Ամէն հատի պա՞գ մի տամ,ու՞ր եղեր կամ ու՞ր տի լինի:

Մըտիկ իմ եարին արէք,զինչ հագեր՝ ամենն է կանաչ,

Հագեր գոյնըզգույն կապայ,կոճակ ու օղակն է կանաչ.

Առեր ու պաղչան մըտեր,ջուր կերթայ,եզերն է կանաչ.

Մըտիկ ծառերուն արէք,ծառն ծաղկեր,տերեւն է կանաչ:

Աշակերտները կերգեն,քանի որ բառերը էկրանին գրված է:Տպավորիչ երաժշտությունից հետո կարծում ենք ,որ դասարանում կստեղծվի մի տեսակ տաք ու հայկական մթնոլորտ,ինչը աշակերտներին կմղի ավելի կենդանի,հայեցի ու հոգևոր տարածք:

Նրանք կփորձեն խոսել իրենց տպավորություններից ուսուցչի հարցադրումների սահմաններում,կպատասխանեն մեկ բառով.

- Ի՞նչ զգացի
- Ի՞նչ գույն տեսաք
- Ձեզ դուր եկա՞վ երաժշտությունը
- Իսկ բառե՞րը
- Եթե փորձեք վերնագրել,ի՞նչ կվերնագրեիք
- Կռահեցի՞ք,թե ինչ ժանրի ստեղծագործություն էր:

Գրատախտակին կգրեն **Հայրեն** բառը(**Հայրեն** բառի ստուգաբանությունը ուսուցիչը կբացատրի Քուչակի մասին տեղեկություններ հաղորդելուց,ինչու չէ ,նաև՝ փոխանակելուց հետո):

Մենք գտնում ենք,որ չնայած հայրենները Քուչակին պատկանելու վերաբերյալ կան տարբեր կարծիքներ,այնուամենայնիվ, բազմաթիվ վկայությունների հիման վրա,կարելի է հաստատապես ասել,որ հայրենների հեղինակ է ճանաչվել 16-րդ դարի բանաստեղծ Ն.Քուչակը:

Ինչպես ռուս բանաստեղծ և քննադատ Լև Օզերովն է ասում. «Հետազոտողների մեջ ժամանակ առ ժամանակ ցանկություն է առաջանում հզոր հեղինակներից մեկի ստեղծագործությունը վերագրել ուրիշներին:

Այդպես վարվեցին Հոմերոսի հետ:Այդպես վարվեցին նաև Շեքսպիրի հետ:

Բայց…դա մեկ մարդ է,սակայն ուժեղ մարդ,մեկ ձայն է,սակայն հզոր ձայն,ոչ երգչախումբ:Ես ասում եմ՝չեմ հավատում,թե մի քանի աշուղ են:Դա մեկ Նահապետ է…»

/գրակ.1/

Ի վերջո, Քուչակի թոռանը պատկանող ձեռագիր հիշատակարանում 1637թ.գրված է եղել հետևյալը.

«Յիշեցէք զՔուչակ և զմեծ պապ իւր Նահապետ Վարպետն,որ մականուն Աշըղ քուչակ ասի…»/գրակ.2 էջ 464/

Երկար ժամանակ պահպանվել է Ն.Քուչակի տապանաքարը իր ծննդավայր Խառակոնիս գյուղի Սուրբ Թեոդորոս վանքի բակում,ինչից պարզվում է,որ նա մահացել է 1592թ.

Քուչակը ճանաչվել ու սիրվել է ժողովրդի կողմից.դա են վկայում այն ավանդությունները, որոնք հյուսվել են նրա մասին

Ուսուցիչը կներկայացնի դրանցից մի քանիսը.

Ըստ ավանդություններից մեկի՝Քուչակն իր երգերի կախարդական ուժով բուժել է թուրք սուլթանի՝անբուժելի հիվանդությամբ տառապող կնոջը,որի համար սուլթանը Քուչակի ցանկությամբ Կոստանդնուպոլսից մինչև Խառակոնիս կառուցել է տվել 7 եկեղեցի և 7 մզկիթ:

Մեկ այլ ավանդություն պատմում է,որ Քուչակը համագյուղացիներին հրավիրում է գյուղի եկեղեցու մոտ,ինքը բարձրանում է վանքի կատարը և խնդրում հենց ընկած տեղում թաղել իրեն:Գյուղացիները չեն հավատում նրա խոսքին:Քուչակը ցած է նետվում ու մահանում:Թաղում են այնտեղ,որտեղ ընկել էր՝եկեղեցու պատի տակ:

Վարագա վանքի միաբան,վարդապետ Արիստակես Տեկանցը 1882թ.հրատարակել է «Հայերգ» վերնագրով միջնադարի հայ բանաստեղծների գործերի ժողովածու,որտեղ հիշատակվում է Քուչակի անունը.

Բանաստեղծություններից մեկի մեջ կան այսպիսի տողեր.

Ես Քուչակն եմ վանեցի

Ի գեղէն Խառակոնիսայ,

Լցեր եմ հարիւր տարին,

Էլ չի գար մտքիկս ի վերայ…

Ի դեպ,հարյուր տարեկան հասակում կանացի գեղեցկությամբ հիացած քնարերգուն թեպետ գանգատվում է իր հիշողությունից,բայց իր այս ոտանավորում հատ առ հատ հիշատակում է ժամանակի քրիստոնյա աշխարհի համարյա բոլոր հայտնի մայրաքաղաքները `այդ թվում նաև Մոսկվայի անունը:/գրակ.2 էջ 465/

Քուչակյան ստեղծագործությունները,որ հիմնականում քառյակներ են, ձեռագրերում սովորաբար կոչվում են հայրեններ:

Անդրադառնալ գրատախտակին գրված **հայրեն** բառին:Ուսուցիչը կբացատրի ստուգաբանությունը,այն է,հայրեն բառը առաջացել է հայերեն բառից՝առաջին ե-ի սղումով:

Մեկ-երկու հայրեն կինչի ուսուցչի արտասանությամբ,աշակերտները կփորձեն վերլուծել հայրենները **քառաբաժանման** միջոցով.սա շատ հետաքրքիր մեթոդ է աշակերտին խոսեցնելու,արտահայտվելու հնարավորություն տալու համար:

Այնուհետև մեզ օգնության կգա տեխնիկական միջոցը:Էկրանին կցուցադրվի սիրված հայրեններից 2-3-ի հայերեն,ռուսերեն,անգլերեն տարբերակները:

Աշակերտները մեծ ոգևորությամբ կընթերցեն հայրենները տարբեր լեզուներով, ինչը մեծ հետաքրքրություն կառաջացնի նրանց մեջ:

Ես աչք ու դու լոյս հոգի,առանց լո՛յս՝աչքն խաւարի.

Ես ձուկ ու դու ջուր,հոգի,առանց ջու՛ր՝ ձուկըն մեռանի.

Երբ զձուկն ի ջրէն հանեն ւ'ի այլ ջուր ձրգեն,նայ ապրի,

Երբ զիս ի քենէ զատեն,քան զմեռնելն այլ ճար չի լինի:

Я –глаза,а ты свет,душа моя.Без света глаза меркныт.

Я рыба,а ты-вода,душа моя.Без воды рыба умирает.

Если вытащить рыбу из воды и бросить в другую,оно будет жить.

Если меня разлучат с тобой-умру,и сметрь мне будет избавленъем.

I am the eye,you are the light,my love.Blind without lihts is the eye.

I am a fish,the water you,my love.Without water fish must die.

If you pull a fish from the river and throw it in another it will live

But if am parted from you

I'll die without hope of rereprieve.

Այնուհետև աշակերտները կփորձեն գտնել լեզուների մեջ ընդհանրությունները,իմաստով մոտ բառերը,կվերլուծեն,կհայտնեն իրենց կարծիքները,թե ո՞ր լեզվով ավելի գեղեցիկ հնչեց,մի քանիսին կհանձնարարվի **հայրեն** բառով ակրոստիքոս գրել:

Ըստ էկրանին ցուցադրված տարալեզու հայրենների՝(մենք ներկայացրինք դրանցից մեկը) կներկայացվի նաև դրանց տաղաչափական առանձնահատկությունները,այն որ հայրենները բաղկացած են 4 15 վանկանի տողից, նույնահանգ են,երբեմն տողերը երկատվում են (7-8 վանկ),գրվում 8 տողով:

Այստեղ կարևոր է հիշատակել նաև,որ հայրենները կոչվել են **Անտունիներ**:Տեղին կլինի լսել Կոմիտասի **«Անտունիները »** մենակատար Հովի.Գրիգորյան,ձայնակցում է Նվարդ Ալոյանը:Հոգեպարար մի երաժշտություն,որի շնորհիվ աշակերտները ավելի պատկերավոր ,ավելի զգայական կվերապրեն հայրենի բովանդակությունը:/էլ.գ.5/:Իսկ եթե մեր բախտը ժպտա ու դասարանում ունենանք այնպիսի մի հզոր ձայն,որը կենդանի կհնչեցնի **Անտունիները**,ուրեմն մեր խնդիրը կատարած կհամարենք կատարելապես:

(Իսկ նման տաղանդավոր աշակերտներ մենք մշտապես ունեցել ենք,որոնք այսօր մեծ բեմեր են նվաճում):

Այս ամնեից հետո կխոսվի հայրենների տեակների մասին (ըստ բովանդակության). դրանք կարելի է բաժանել 3 մասի՝ սիրո,խրատական և դարիբության(պանդըխտության):

Շատ կարևոր է աշակերտներին հիշեցնել այն հանգամանքը,որ Ն.Քուչակը ստեղծագործում էր միջնադարի խավարամոլության պայմաններում,երբ կինը պաշտոնական եկեղեցու կողմից համարվում էր սատանայական անոթ:

Սակայն այդ հանգամանքը Քուչակին չխանգարեց դառնալ սիրո մեծ երգիչը:

«Այդ պայմաններում կանացի մարմնական գեղեցկությունները կրոնական գերագույն արժեքներից վեր դասելը և բացահայտ ներբողումը հումանիստական առաջավոր տրամադրությունների արտահայտությունն էր/գ.2/

Քուչակի հայրեններով բացվում է մարդու անսահման հոգեկան աշխարհը,որը բընավ վերացական չէ.դրանք գրեթե միշտ օժտված են փոքրիկ սյուժեներով ու գործողությունով, որոնք էլ ստեղծում են իրական դրույթներ:

Քառյակներից մեկում բանաստեղծը պատմում է,թե ինչպես իրենց թաղի ծուռումուռ փողոցներով հանկարծ դեմն է ելնում սիրուհին,որին ինքը գրկում է ու պինդ համբուրում,իսկ նա հեռանում է լալով,ասելով թե «ի խաղք եղանք ցորեկով»: «Քուչակի քառյակներում ճաճանչվում է մարդկային հոգին,սիրո հոգեբանությունը իր բազմերանգությամբ,մի բան որը նրա ստեղծագործությունը հարազատ է դարձնում նոր ժամանակներին»/գ.2 էջ 471/:

ԳԼՈՒԽ 3. Ժամանակակից շունչ միջնադարյան Հայրեններին

Ինչքան էլ Քուչակի ստեղծագործությունը հարազատ է նոր ժամանակներին,ինչքան էլ հայրենների ուսուցումը հետաքրքիր լինի,այնուամենայնիվ այսօրվա աշակերտը մի նոր շունչ,մի նոր խոսք է ուզում լսել,ուստի որոշեցինք ժամանակակից շունչ հաղորդել հայրեններին.Քուչակի անզուգական հայրենների կողքին զուգահեռ ներկայացնել Համո Սահյանի հայրենները,որոնք չորս հարյուրամյակ անց անգամ պահել են իրենց ժանրային առանձնահատկությունները,միայն ավելի արդիական ու նոր շնչով:

Կարծում ենք,չնայած մի փոքր կշեղվենք ծրագրային նյութից(մինչ այս միջնադարյան հայրեններին զուգահեռ չի մատուցվել արդի դարաշրջանի հայրենները),բայց այդ շեղումը հօգուտ աշակերտի կլինի:

Աշակերտներին մտովի,ժամանակի մեքենայով կտեղափոխենք 20-րդ դար,դեռ հեղինակի անուն չենք հնչեցնի,միայն,հարկ եղած դեպքում,մի քանի բանալի բառեր կասենք (օր.՝Լոր Շիրազի ժամանակակից,հայրենական պատերազմի մասնակից,Սեզա՛մ,բացվի՛ր և այլն):

Այնուհետև ուսուցիչը կներկայացնի Հ.Սահյանի հայրեններից 2-ը, որոնք,ավա՛ղ,

շատ արդիական են,որոնք ասես Սահյանը գրել է հենց մեր օրերի մասին,որոնք դարձյալ մեր վայրագ հարևանների անասնական բնազդի մասին են պատմում:

Հայի համար ասես ոչ միայն երկրագունդն է կլոր,այլև՝պատմությունը:

Մեր պատմությունը անդադար կրկնվում է…

Եվ նորից թափառ մի ցեղ

Մեզ մեզնից խլել է ուզում,

Մեր ազնիվ արյունը տաք

Թեյի տեղ խմել է ուզում:

Մեր արտը դարձնել արոտ,

Մեր վիզը ծռել է ուզում:

Էհ,թող գա,թե մեղքերի

Ճահճի մեջ խրվել է ուզում:

Վխտում են շուրջդ նորից,

Քեզ նորից ոխով հոտոտում,

Մեղքեր են փնտրում քո մեջ

Եվ անմեղ հոգիդ հոշոտում:

Կուլ տալ են հանդգնում քեզ,

Ոռնում են, անվերջ հոխորտում,

Բայց մեկ է,կուլ չես գնա,

Կմնաս նրանց կոկորդում:

Դարձյալ մեզ օգնության կգա տեխնիկական միջոցը:Էկրանի մի կողմում գրված կլինի Ն.Քուչակի հայրեններց երկուսը,մյուսում՝Սահյանի:

Աշակերտները այստեղ համեմատելու հսկայական պաշար կունենան:Նախ կկարդան տարբեր ժամանակներում գրված հայրենները և առաջինը,որ կնկատեն,տաղաչափական զարմանալի նմանությունն է:Կհաշվեն վանկերի քանակը,հանգերի նմանությունները,տողերի դասավորությունը,կգտնեն նաև տարբերությունները:

Եթե աշակերտները կռահեցին ոճական առանձնահատկությունից,թե խոսքը ո՞ր բանաստեղծի մասին էր,լավ,եթե ոչ՝ուսուցիչն ինքը կներկայացնի մեծն Սահյանին:Ի-հարկե,անպայման կնշի այն հանգամանքը,որ հայրենի ժանրով շատ բանաստեղծներ են գրել Քուչակից հետո,բայց Սահյանը խիզախեց գնալ այդ ժանրի հետքերով և վաթ-սունմեկ հայրեն ասել:

Մի հայրեն ասեմ ես էլ,

Իմ ապրած օրերին ասեմ:

Օրհնանքս՝անցավորաց,

Մաղթանքս նորերին ասեմ:

Շահածս տամ հովերին,

Կորածս ծովերին ասեմ:

Թագավորն ապրած կենա,

Աստվածս՝ցորենին ասեմ:

Խիզախեց,բայց չփորձեց մրցել կամ չափվել Քուչակի հետ:

Ճանապարհ ընկնեմ գնամ,

Եվ իբրև կրտսեր գրչակից

Ներումն խնդրեմ խոնարհ՝

Գուսանաց գուսան Քուչակից;

Որ զուլալ ջուր խմելով

Իր զուլալ աղբրանցն ակից

Փորձեցի հայրեն հանել

Իմ խելքի անձուկ փչակից:

Անթաքույց հումորով գրված այս տողերի խորքում,սակայն,ենթատեքստ էլ կա:Չպղտորելով հայրենների քուչակյան ակունքները և հավատարիմ մնալով այդ ժանրի ավանդույթներին՝բանաստեղծը,այնուամենայնիվ,առաջ է տանում,XX դար է բերում հայրենները՝ըստ էության կամուրջ դառնալով XVI և XX դարերի միջև:Իսկ դրա համար հարկավոր էր,ինչպես ինքն է ասում մեկ այլ հայրենում,նաև Քուչակի սիրտ ունենալ:/գրակ.4 էջ 36/:

Խղճիդ հետ զրույց արա

Ամեն օր քնելուց առաջ,

Երկնքի հոնքին նայիր

Աղունդ փռելուց առաջ,

Մի անգամ քեզ ծառ զգա

Կացինդ սրելուց առաջ:

Քուչակի սիրտ ունեցիր

Հայրեններ գրելուց առաջ:

Այո,Սահյանը իր խղճի հետ զրույց անելով խիզախեց ձեռք մեկնել հայրեններին՝որպես բնիկ հայկական բանաստեղծության տեսակ,որպես մարդու հոգուն և հայոց լեզվին հարազատ բանաստեղծական ֆենոմեն:

Մինչ Համո Սահյանը կծավալվեր ու կխտացներ սեփական հայրենների տեսրը,նա պիտի հիմնավորեր սխրանքի գնալու իր քայլերը:Հայաստանից չհեռանալու «ուրիշ տեղ գնալու և մնալու» իր ժխտական կեցվածքի առաջին պայմանը նա տեսնում է այն հիմնավոր պատճառի մեջ,որը կոչվում է «Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,ախր ուրիշ

տեղ հորովել չկա»:Այսինքն ուրիշ տեղ բնիկ հայկական բանաստեղծություն(հայրեն) և բնիկ հայկական երաժշտություն(հորովել) չկան:

Ժամանակի և տարածության հորձանուտում Հ.Սահյանը հայրենների պարագայում լրիվ զինաթափվում և անկեղծանում է,որովհետև իրեն ոչ միայն XX,այլ նաև XVդարում է տեսնում:/գրակ 4 էջ 38/

Հենց այս գաղափարն է,որ աշակերտը պետք է ընկալի,որ մեր մեծերի ստեղծագործությունները միայն այս դարի համար չեն գրվում,այլ անցած ու գալիք դարերի,որովհետև հայ ժողովուրդը եղել է, կա ու կլինի հավերժ,քանի դեռ սիրում և գնահատում ենք ինքներս մեզ:

Հ.Սահյանը հայոց ավանդական հայրենները վերածնեց նոր ձևով ու բովանդակությմանբ՝ յուրատեսակ կամուրջ դառնալով միջնադարյան ու նորօրյա հայ քնարերգության միջև,ցույց տալով նաև որ հայրենները չեն սպառել իրենց հնարավորությունները:/Շ.Բ.Դավթյան «Հայրենների վերածնունդը», էջ 42/

Եզրակացություն

Ամփոփելով՝ «Հայրենների ուսուցումը ժամանակակից մեթոդների գործադրմամբ»

թեման՝մենք կարծում ենք,որ վերը նշված տեխնիկական և ավանդական մեթոդների՝ արդյունավետ կիրառության դեպքում մեր առջև դրված նպատակներն ու խնդիրներնը կհամարենք կատարված:

Արդյունավետ ուսուցման երաշխիքներից մեկն էլ յուրաքանչյուր դասին համապատասխան նյութի յուրացումը բոլոր աշակերտների համար ապահովելն է:

Շատ կարևոր է այն,որ աշակերտները նյութը յուրացնեն ոչ միայն լսելով,դիտելով,

մտապահելով,անգիր վերարտադրելով,այլև մասնակցելով,մտածելով,հաղորդակցվելով:Աշակերտը պասիվ լսողից պետք է դառնա գործընթացի ակտիվ մասնակիցը:

Չպետք է մոռանալ հայտնի ասացվածքը. «Ես լսում եմ և մոռանում,ես տեսնում եմ և հիշում,ես կատարում եմ և սովորում»:

Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով,դրանց հետևողական կիրառումով՝

փորձեցինք կամուրջ հանդիսանալ միջնադարյան ու նորօրյա հայ քնարերգության միջև:

Կարծում ենք,հնարավոր դարձավ միջնադարյան բանաստեղծությանը զուգահեռ ներկայացնել ժամանակակից բանաստեղծությունը և հասկանալ,որ

16-րդ դարում էլ 20-րդ-ում էլ հայի տեսակը նույնն է լինելու, «նույն առուն ու գետակը,նույն սարն ու ձորը,նույն անտառն ու մարգագետինը,արևն ու լուսինը,ծիածանն ու երկինքը… »: Եվ այդ ամենի հետ շփումներից ծնված հայրենը այս դարի համար չի գրվում,այլ անցած ու գալիք դարերի:/գր.4 էջ 38/:

Օգտագործված գրականության ցանկ

1. 9-րդ դաս.դասագիրք /Դ.Գասպարյան 2013 էջ 162/
2. Մ.Մկրյան /Հայ մշակույթի նշանավոր գործիչները էջ.466/
3. Շ.Բ.Դավթյան/Հայրենների վերածնունդը/

Էլեկտրոնային գրականություն

1. http://www ysu.am/files/04s Davtyan.pdf
2. https/hy.m.wikipedia.ors.wiky.
3. Nahapet Quchak,Hayrenner.mp4
4. https//mar_amirchanyan.livejournal.com 338350 html
5. yutube Կոմիտաս «Անտունիներ»